

Բանալի բառեր՝ բնակչություն, բնակչության վերարտադրություն, բնական աճ, տարածքային տարբերություններ, տարածքային հիմնախնդիրներ:

ՀՏԴ 331.556:339:338(479.25)

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱԾԱՆԱԿԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հարություն ԱՐԹԵՆՅԱՆ

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության
ամբիոնի մագիստրաստ

Հասարակական աշխարհագրության հետազոտություններում կարևոր նշանակություն ունի բնակչության վերարտադրության առանձնահատկությունները, ներքին տարածքային տարբերությունները և առկա հիմնախնդիրների բացահայտումը: Բնակչությունը հանդես է գալիս որպես չափազանց բարդ սոցիալական օրգանիզմ: Այն ունի կենսաբանական կարևորագույն հատկանիշ, երբ կյանքից հեռացող սերունդները փոխարինվում են նորով, այդպիսով բնակչությունը անընդհատ վերականգնվում է: Այդ պրոցեսը հայտնի է բնակչության վերարտադրություն կամ բնական շարժ անունով: Բնակչության բնական շարժը բնակչության թվի փոփոխությունն է, որը տեղի է ունենում բնական եղանակով՝ ծննդի և մահվան հետևանքով:^[1] Բնակչության բնական վերարտադրության (շարժի) ցուցանիշներն են ծնելիությունը, մահացությունը և դրանց տարբերությունը՝ բնական աճը: Տարածաշրջանի բնակչության վերարտադրության տարածաժամանակային ուսումնասիրության արդյունքում հնարավոր է բացահայտել տարբեր ժամանակահատվածներում բնակչության ծնելիության և մահացության ցուցանիշների փոփոխումը, դրանց պատճառները և տարբերությունները: Այն տարածաշրջանի համար ունի կարևոր տնտեսական, սոցիալական և ռազմավարական նշանակություն և դա պետության կողմից իրականացվող ժողովրդագրական բաղաբանության հիմքն է:

ՀՀ-ում մշտական բնակչության թիվը տարիների ընթացքում փոփոխվել է կապված բնական և մեխանիկական շարժերի հետ: Հայ ընտանիքներում պատմականորեն բարձր է եղել ծնունդների թիվը, սակայն ժամանակի ընթացքում այն սկսել է նվազել կապված բազմաթիվ բնական, սոցիալ-տնտեսական, բաղաբանական գործոններով:

Աղյուսակ 1.

ՀՀ բնական շարժի ցուցանիշները (%) 1950-2017թթ. [3-5]

Տարեթիվը	Ծնելիություն	Մահացություն	Բնական աճ
1950	32.1	8.5	23.6
1960	40.1	6.8	33.3
1970	22.1	5.1	17.0
1980	22.7	5.5	17.2
1990	22.5	6.2	16.3
1995	15.0	7.6	7.4
2000	10.6	7.5	3.1
2005	11.9	8.4	3.5
2010	14.7	9.2	5.5
2016	13.5	9.4	4.1
2017	12.7	9.2	3.5

Ծնելիության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1960-ին, այն կազմել է 40.1%: Սկսած 1990-ական թվականներից, երբ փլուզվեց ԽՍՀՄ-ը, տեղի ունեցավ Սպիտակի երկրաշարժը, սկիզբ առավ Արցախյան պատերազմը, տնտեսական ու էներգետիկ ճգնաժամը և արտագաղթը հանգեցրին բնակչության ընդհանուր թվաքանակի և ծննդի նվազմանը: Ըստ աղյուսակ 1-ի տվյալների ծնելիության գործակիցը 1990-ին կազմել է 22.5%, 1995-ին 15% , 2000-ին 10.6%: 2000-ին ծնելիությունը համեմատած 1960-ի հետ նվազել է մոտ 4 անգամ: 1994-2000թթ. ամեն մի տարում ավելի քան 30-45 հազարով ավելի քիչ երեխաներ են ծնվել քան դրան նախորդող տասնամյակի յուրաքանչյուր տարում: Հետագա տարիներին ծնելիությունը սկսել է փոքր ինչ աճել և 2017թ. այն կազմել է 12.7%:

Մահացածության գործակիցը 1970թ.-ին եղել է 5.1%, այն սկսել է տարեցտարի ավելանալ և 2017թ. կազմել է 9.2%: Աճի հիմնական պատճառը բնակչության սեռատարիքային կազմի փոփոխությունն է: Ծնելիության թվի նվազմանը զուգընթաց ավելանում է ծերերի հաշվեկշիռը բնակչության կազմի մեջ, որն էլ իր հերթին հանգեցնում է մահացության գործակիցի աճին:

Կախված ծնելիության և մահացության գործակիցների հետ փոփոխվում է նաև բնական աճի ցուցանիշները: Այն ամենաբարձրն է եղել 1960-ին 33.3%, իսկ ամենացածրը՝ 2000-ին 3.1%: Այսինքն, բնական աճի ցուցանիշը 40 տարվա ընթացքում նվազել է 10 անգամ: Իսկ 2017-ին այն կազմել է 3.5%:

ՀՀ-ում գյուղական և բաղաբան բնակչության բնական աճի հաշվեկշիռը նույնպես փոփոխվել է տարիների ընթացքում, եթե 1960-ին բաղաբաններում ծնելիության գործակիցը եղել է 33.8%, իսկ գյուղերում՝ 46.6%, համապատասխանաբար 1970թ. 21.1%, 23.7%, 1980-ին 21.5%, 25.1% և սկսած 2011-ից ծնելիությունը ավելի բարձր է եղել բաղաբաններում 2016-ին 13.9%, 13%: Դա մեծ մասամբ կապված է գյուղերում երիտասարդների թվի նվազմանը՝ արտագաղթի պատճառով, ինչպես նաև գյուղերում բաղաբանի միջավայրի ապրելակերպի տարածման հետևանքով: Գյուղերում մարդաշատության վրա ազդող կարևոր գործոններ են՝ տարածքի մակերևույթի բնույթը, ապահովածությունը ջրային ռեսուրսներով, տրանսպորտային

մատչելիությունը, ուրբանիզացիայի մակարդակը, գյուղական բնակավայրերի ճոճանակային միգրացիայի ինտենսիվությունը, գյուղական բնակավայրերի հեռավորությունը բաղաձայնից և շրջակայքից: [2]

2014-2017թթ. տվյալներով բոլոր մարզերում և ք.երևանում նվազել է ծնելիության ցուցանիշը: Ամենաշատը նվազել է Շիրակի մարզում 2.6%, այնուհետև Կոտայքի 2%, և Լոռու 1.9% մարզերում:

2014-2017թթ. տվյալներով բոլոր մարզերում և Երևան քաղաքում նվազել է բնական աճը, իսկ ամենաշատը՝ Կոտայքի 2.4%, Լոռու 2.3% Շիրակի 2.3%, Վայոց Ձորի 2.3% և Արագածոտնի 2.2% մարզերում:

Աղյուսակ 2.

ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության բնական շարժի 2012-2016թթ. ցուցանիշները (%) [7]

	Ծնելիություն				Մահացություն				Բնական աճ			
	2013	2014	2015	2016	2013	2014	2015	2016	2013	2014	2015	2016
ՀՀ բնակչությունը	13.8	14.3	13.9	13.5	9.0	9.2	9.3	9.4	4.8	5.1	4.6	4.1
Քաղաքային	14.0	14.6	14.2	13.9	9.1	9.2	9.3	9.6	4.9	5.4	4.9	4.3
Գյուղական	13.6	13.8	13.4	13.0	8.9	9.2	9.3	9.2	4.7	4.6	4.1	3.8

Աղյուսակ 3.

ՀՀ մարզերի և ք. Երևանի բնական շարժի ցուցանիշները 2014-2017թթ. (%) [3,4, 5-8]

	Ծնելիություն				Մահացություն				Բնական աճ			
	2014	2015	2016	2017	2014	2015	2016	2017	2014	2015	2016	2017
ք. Երևան	15.1	14.9	14.3	13.4	8.7	8.6	8.6	8.3	6.4	6.3	5.7	5.1
Արագածոտն	14.7	13.8	13.5	13.0	8.9	9.1	9.0	9.4	5.8	4.7	4.5	3.6
Արարատ	14.5	14.5	14.2	12.9	8.7	8.6	9.3	8.9	5.8	5.9	4.9	4.0
Արմավիր	13.5	13.0	12.8	11.8	8.8	8.7	8.8	9.0	4.7	4.3	4.0	2.8
Գեղարքունիք	13.2	13.6	13.1	12.5	7.8	7.9	8.3	7.8	5.4	5.7	4.8	4.7
Լոռի	14.6	13.6	13.6	12.7	12.0	12.5	12.9	12.4	2.6	1.1	0.7	0.3
Կոտայք	14.8	14.2	13.8	12.8	8.9	9.2	9.2	9.3	5.9	5.0	4.6	3.5
Շիրակ	15.1	14.3	13.7	12.5	10.9	10.7	10.8	10.6	4.2	3.6	2.9	1.9
Սյունիք	10.7	10.2	10.5	9.7	9.0	9.2	9.8	9.3	1.7	1.0	0.7	0.4
Վայոց Ձոր	12.4	11.6	12.5	11.3	9.6	10.6	10.2	10.8	2.8	1.0	2.3	0.5
Տավուշ	11.8	11.3	11.2	11.1	10.5	11.3	11.2	10.8	1.3	-	-	0.3

2016թ. քաղաքային բնակչության բնական աճը եղել է 4.3%, իսկ գյուղական բնակչությանը՝ 3.8%: 2017թ. տվյալներով ծնվածների ամենամեծ ցուցանիշներն ունեն ք. Երևանը 13.4%, Արագածոտնի 13.0%, Արարատի 12.9%, Կոտայքի 12.8% մարզերը: Ծնելիության ամենացածր ցուցանիշներն ունեն Սյունիքի 9.7%, Տավուշի 11.1% և Վայոց Ձորի 11.3% մարզերը:

Մահացության ցուցանիշով ամենաբարձրը Լոռու 12.4%, Տավուշի 10.8% և Վայոց Ձորի 10.8% մարզերն են: Մահացության ամենացածր ցուցանիշներն ունեն Գեղարքունիքը 7.8%, ք. Երևանը 8.3% և Արարատը 8.9%:

Բնական աճի ամենաբարձր ցուցանիշներն ունեն ք. Երևանը 5.1%, Գեղարքունիքի 4.7% Արարատի 4.0% և Արագածոտնի 3.6% մարզերը: Բնական աճի ցածր ցուցանիշներ ունեն Լոռու 0.3% և Սյունիքի 0.4% մարզերը: Տավուշի մարզում վերարտադրության պարզ ձև է՝ բնական աճը 2015-16թթ. եղել է 0: Այսինքն ծնելիության և մահացության թվերը հավասար են և մարզը բնական աճ չի ապահովել, իսկ 2017-ին Տավուշի մարզում կազմել է 0.3%:

Աղյուսակ 4.

ՀՀ մշտական բնակչության թվաքանակի փոփոխության բաղադրիչները 2015-2017թթ. (1000 մարդ) [8]

	Բնակչության թվաքանակը տարեկան	Հունվար-Դեկտեմբեր			Բնակչության թվաքանակը տարեվերջի դրությամբ
		Բնական հավելած	Միգրացիայի մնացորդ	Ընդհանուր հավելած/նվազում (+, -)	
2015	3010.6	13.9	-25.9	-12.0	2998.6
2016	2998.6	12.3	-24.8	-12.5	2986.1
2017	2986.1	10.3	-23.5	-13.2	2972.9

Բնական աճի այս ցուցանիշը մեծ վտանգ է իր մեջ պարունակում, քանի որ առկա միգրացիայի պայմաններում մշտական բնակչության թիվը հանրապետությունում նվազում է, մյուս կողմից էլ բնակչության մեջ ավելանում է ծերերի թիվը՝ այլ կերպ ասած բնակչությունը «ծերանում» է: Այսպես, 2015թ.-ին ՀՀ-ում մշտական բնակչությունը նվազել է 12000-ով, 2016թ.՝ 12500-ով, 2017թ.՝ 13200 մարդով:

Աղյուսակ 5.

Կյանքի սպասվող միջին տևողությունը 1990-2016թթ. [4-6]

Տարի	Տղամարդ	Կին
1990	67.9	73.4
1995	66.5	74.7
2000	70.1	75.8
2005	70.1	76.2
2010	70.1	76.4
2011	70.5	77.3
2012	70.9	77.5
2013	71.5	77.9

2014	71.8	78.1
2015	71.7	78.2
2016	71.6	78.3

Կյանքի սպասվող միջին տևողությունը 33-ում 1990-2016թթ. սկսել է աճել: Տղամարդկանց համար ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2014թ. 71.8 տարի, ամենացածրը՝ 1995-ին 66.5 տարի: Կանանց համար ամենաբարձր ցուցանիշը եղել է 2016թ. 78.3 տարի, ամենացածրը 1990թ.-ին 73.4 տարի: Միևնույն տարեկան երեխաների մահացությունը նվազման միտում ունի կապված առողջապահական համակարգի զարգացումով:

Աղյուսակ 6
Գրանցված ամուսնություններն ու ամուսնալուծություններն՝
ըստ 33 մարզերի և ք.Երևանի 2012-2017թթ. (%) [6]

	Ամուսնություն						Ամուսնալուծություն					
	2012	2013	2014	2015	2016	2017	2012	2013	2014	2015	2016	2017
ք. Երևան	6.7	6.6	6.4	6.4	6.1	5.8	1.4	1.5	1.6	1.4	1.5	1.5
Արագածոտն	6.6	6.1	6.7	5.8	5.5	5.1	0.8	1.0	1.4	1.3	1.1	1.3
Արարատ	6.5	6.2	6.5	5.5	5.1	5.0	0.8	1.1	1.4	1.1	0.9	1.0
Արմավիր	6.5	6.3	6.1	5.9	5.4	5.3	0.7	1.0	1.2	1.0	0.9	1.1
Գեղարքունիք	5.8	5.1	5.2	4.9	4.6	4.2	0.6	0.6	0.7	0.6	0.6	0.7
Լոռի	5.6	5.7	7.0	5.6	5.0	4.6	1.8	2.1	2.8	2.1	2.4	2.4
Կոտայք	6.8	6.4	7.0	6.4	5.6	5.1	0.9	1.1	1.4	1.2	1.1	1.2
Շիրակ	5.6	5.4	6.0	5.2	4.4	3.9	0.9	1.1	1.7	1.1	1.0	1.2
Սյունիք	5.2	5.3	5.4	4.9	4.8	4.6	0.7	0.8	1.2	1.0	0.9	1.2
Վայոց Ձոր	7.1	6.9	6.3	6.9	7.1	5.7	0.9	1.4	1.5	0.9	0.8	1.0
Տավուշ	5.7	5.0	5.0	4.9	8.2	4.3	1.0	0.7	1.0	0.5	0.6	0.8

Ամուսնություններն ու ամուսնալուծություններն իրենց ազդեցությունն են ունենում ծնելիության ցուցանիշի վրա, որն էլ իր հերթին բնական շարժի հիմնական ցուցանիշներից մեկն է: 2012-2017թթ. ընթացքում բոլոր մարզերում և ք. Երևանում նվազել է ամուսնությունների թիվը: Շիրակի և Կոտայքի մարզերում այն նվազել է 1.7%-ով, Արագածոտնի և Արարատի մարզերում՝ 1.5%-ով: 2017-ին ամենաբարձր ցուցանիշներն ունեն ք.Երևանը 5.8%, Վայոց ձորի մարզը 5.7%, Արագածոտնի և Կոտայքի մարզերը 5.1%: Ամենացածր ցուցանիշն ունեն Շիրակի 3.9%, Գեղարքունիքի 4.2%, Տավուշի 4.3% մարզերը:

Ստահուգիչ է 33-ում ամուսնալուծությունների աճը: Այն գրեթե բոլոր մարզերում 2012-17թթ. աճել է, բացի Գեղարքունիքի մարզից, որտեղ թիվը մնում է կայուն: Տավուշի մարզում համեմատած 2012-ի հետ նվազել է 0.2%, սակայն նույնպես էլ ավելացել է համեմատած նախորդ տարվա ցուցանիշի հետ: Լոռու մարզում գրանցվել է աճ 0.6%, իսկ ամենամեծ ցուցանիշներն ունեն ք. Երևանը 1.5% և Լոռու մարզը 2.4%: 33-ում 2017թ. բնական շարժի միջինից բարձր ցուցանիշներ ունեն ք. Երևանը, Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի մարզերը, Կոտայքի մարզում ցուցանիշը նույնն է ինչ միջին ցուցանիշը 3.5%: Մնացած մարզերը ունեն միջինից ցածր ցուցանիշ:

Աղյուսակ 7.
Առաջին ամուսնության միջին տարիքը 1995-2016թթ. [3,5,6]

Տարի	Քաղաքային բնակչություն		Գյուղական բնակչություն	
	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին
1995	26.5	22.5	25.9	20.6
2000	27.3	23.6	26.4	21.7
2005	28.4	24.5	27.4	22.8
2010	28.8	25.2	27.6	23.5
2015	29.8	26.9	28.8	25.0
2016	30.0	27.0	28.9	25.0

33-ում սկսած 1995թ.-ից աճում է ամուսնության միջին տարիքը: Քաղաքային բնակավայրերի համար տղամարդկանց մոտ ամուսնության ամենացածր տարիքը գրանցվել է 1995թ. 26.5, իսկ ամենաբարձրը 2016-ին՝ 30: Քաղաքային բնակչության մեջ կնոջ ամուսնության ամենացածր տարիքը նույնպես գրանցվել է 1995-ին 22.5, իսկ ամենաբարձրը՝ 2016թ. 27: Գյուղական բնակչության համար ամուսնության տարիքային շեմը ավելի ցածր է՝ 1995թ. 25.9, կանայք 20.6, 2016թ. համապատասխանաբար 28.9 և 25:

33 մշտական բնակչության բնական շարժի ցուցանիշները առանձնանում են մարզային որոշակի առանձնահատկություններով և հիմնախնդիրներով, որոնց բացահայտումն ունի գիտագործնական մեծ նշանակություն: 33 մարզերի և Երևան քաղաքի մշտական բնակչության բնական շարժի վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1. 3ամատարած ամբողջ հանրապետության տարածքում բնական շարժի նվազումը հանգեցնում է երկրում ժողովրդագրական հիմնախնդրի: Բնական շարժի այսպիսի ցուցանիշները բացասական միգրացիայի պայմաններում հանգեցնում են մշտական բնակչության թվի նվազեցմանը: Այս փաստը մեր երկրի համար գլխավոր մարտահրավերներից մեկն է:

2. Գյուղ-քաղաք հարաբերակցության մեջ բնական աճի ցուցանիշը ավելի բարձր է քաղաքներում (%) , սակայն գյուղերում ավելի բարձր է բազմազավակության ցուցանիշը:

3. Այժմ այն ժամանակաշրջանն է, երբ ամեն տարում մոտ 40000-ով ավելի քիչ ծնվածներն են վերարտադրվում և դա ուղղակիորեն նվազեցնում է ծնելիությունը:

4. 33-ում բնական շարժի ցուցանիշի վրա ազդում է ամուսնությունների թվի կրճատումը: Երևանում և բոլոր մարզերում այն ունի նվազման միտում:

5. Բացասական է ազդում նաև բնական շարժի վրա 33-ում աճող ամուսնալուծությունների թիվը, որը վերջին

տարիներին համատարած բնույթ ունի ՀՀ-ում: Տարեցտարի ավելանում է ամուսնության միջին տարիքը ամբողջ ՀՀ-ում, որի արդյունքում նույնպես նվազում է ծնելիությունը:

Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում տարիների ընթացքում փոփոխվել է վերարտադրության վարքը և անկա իրավիճակը ու ստեղծված տարածաշրջանային առանձնահատկությունները պահանջում են ՀՀ-ում իրականացնել սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական այնպիսի քաղաքականություն, որը հնարավորություն կտա երկրում ձևավորել բնակչության համար առավել բարձր բնական վերարտադրություն: Այն ուղղակիորեն կապված է երկրում անկա սոցիալ-տնտեսական իրավիճակից: Կառավարության կողմից ընդունված որոշումները, որոնք վերաբերվում են ամեն մի ծնված երեխայի համար միանվագ գումարի տրամադրումը, 4 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին բազմազավակ ճանաչումը, նորածին մոր աշխատանքի դեպքում դայակի վարձատրումը, երիտասարդ ընտանիքներին հիպոտեկային վարկի տրամադրումը և այլ որոշումներ խթանում են ծնելիության բարձրացմանը, բայց չեն ապահովում բավարար արդյունավետություն: Ներկա պայմաններում միայն սոցիալ-տնտեսական ավելի բարենպաստ պայմաններ ունենալը և արտագաղթի նվազեցումը կարող են ամենամեծ խթանը հանդիսանալ բնակչության վերարտադրության բարձրացման համար:

Բնակչության վերարտադրության խթանմանը կնպաստեն նաև հետևյալ առաջարկությունները. ա) բնակչության սահմանափակ սոցիալական բևեռացման զսպումը, բ) ՀՀ-ում մեր օրերում տղամարդը ընտանիք է կազմում միջինը 30 տարեկանում, ըստ այդմ պետք է բարձրացնել հիպոտեկային վարկի տրամադրման տարիքային շեմը և սահմանել ավելի ցածր տոկոսադրույք, գ) ՀՀ-ում ռեգիոնալ քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը պետք է դառնա նաև ժողովրդագրական առավել բարենպաստ քաղաքականության կազմակերպումը բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերում բնակչության ծնելիության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Օգտագործած գրականություն

1. Մանասյան Մ.Գ. Հասարակական աշխարհագրական հետազոտությունների մեթոդները, Երևան, ԵՊՀ հրատ., 2008, 258 էջ:
2. Պոտոսյան Ա.Յ. Հայաստանի Հանրապետության գյուղական բնաչությունը և բնակավայրերը, Երևան 2013, 412 էջ:
3. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2017, Երևան, 2017:
4. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2017, Երևան 2017:
5. 1989 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, Երևան 1991, 182 էջ:
6. Հայաստանի Հանրապետություն 2011թ. Մարդահամարի արդյունքները (ՀՀ ցուցանիշները), Երևան 2003, 542 էջ:
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, Երևան 2017
8. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-դեկտեմբերին, Երևան 2018

*Ներկայացվել է 26.01.2018թ.
Ընդունվել է սպագրության 28.02.2018թ.*